

# ՀԱՅՅՈՒՆ

## Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Լ Ր Ա Գ Ի Ր

Ամեն ԵՐԵՎԱՆԻ օրերը կը հրատարակուի: Պոստի համար 50 քուտոց գինն է 2 արծար Մեծիս կանխիկ: քղապարտութեան ծախքը բաժանորդաց վրայ: Իսկ գաւառաց համար 2 1/2 արծար Մեծիս: Մանուցման տողը 2 զրդ:

Գաւառաց քղապարտի ծախքը բաժանորդաց վերաբերի: Լրագրոյ վերաբերեալ որ եւ է գրուին ուղղելի առ ՏՅՐԵՆԵՐՈՐԴԻՆԵՐԶԱՆ Մ. Յ. Մեծիսեան ի Կ. Պոստի Չիմայիլի խան վերաբերելի րի. 10:

### ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

#### ԱԶԳԱՅԻՆ

Ազգային ժողովուրդը որ իր սովորական նիստն ըրաւ ի Ղալաթիս ընդ նախագահութեամբ ամեն Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Արքայանան վեհա: Ստեփան փաշայի:

Նախընթաց նիստի ատենագրութիւնը վաւերացուելէ և նախաքննիչ դիւանաց քանի մը տեղեկագիրները կարդացուելէ և նոցա եզրակացութիւնը որոշուելէ վերջը, Ս. Պատրիարք Հօր առաջարկութեանց քննիչ յանձնաժողովոյ տեղեկագիրները կարդացուեցան և ժողովոյ որոշումն ստացան:

1. Մուրատեան վարժարանի խնդրոյն համար յանձնաժողովը կառավարիչ ի ժողով հրաւիրել արդէն կազմեալ յանձնախումբը և իւր տեղեկագիրը մինչև երեք ամիս Ազգ. վարչութեան ներկայացնել, և եթէ դարձեալ չը գումարի, ուրիշ յանձնախումբ մը ընտրել: Այս առաջարկութիւնը թեթև բարեփոխութեամբ մը ընդունուեցաւ:

2. Ս. Պատրիարք Հօր սահմանադրական պատասխանատուութեան խնդրոյն վրայ թեթև վիճաբանութիւն մ'ըլլալով, որոշուեցաւ զայն օրակարգն անցնել իբր սահմանադրական խնդիր և յաջորդ նստին առաջին խնդիր ընել:

3. Սոյ կաթողիկոսական խնդրոյ մասին յանձնաժողովը կառավարիչը որ Սոյ կաթողիկոսին ըրած շորս առաջարկութեանց անընդունելի ըլլալը Ազգ. վարչութեան կողմէն ծանուցուի առ Մկրտիչ կաթողիկոսն, յայտնելով իրեն որ եթէ դարձեալ նոյնին վրայ պնդէ, հրաժարեալ համարուած է: Իսկ եթէ ընդունի իր կաթողիկոսական պաշտօնը շարունակել, այն ատեն վարչութիւնը զարժանն տնօրինէ:

Այս խնդիրը ժողովոյ շեք մ'վիճաբանութեան նիւթ եղաւ. ոմանք կառավարիչին որ առանց կաթողիկոսին հարցուելու, անոր հրաժարականն ընդունուի, առարկելով թէ այդպիսի հարցում մ'ընելը վարչութեան որոշման հակառակ է և թէ վարչական տաղնապ կրնայ յարուցանել: Իսկ ուրիշներ և գլխաւորապէս Ս. Պատրիարք Հայրը և դիւանը կը պնդէին թէ Ազգ. ժողովը Սոյ Մկրտիչ կաթողիկոսին առաջարկութիւնները բացորոշապէս և մի առ մի մերժած չէ. ասոր վրայ հարկ եղաւ ժողովոյ անցեալ նիստերու ատենագրութիւնները աչքէ անցնել, ուր տեսնուե-

ցաւ թէ Ս. Պատրիարք Հայրը և դիւանը իրաւունք ունին. հետեւաբար ատենապետ փաշայի առաջարկութեամբ Սոյ Մկրտիչ կաթողիկոսին ըրած շորս առաջարկութիւնները մի առ մի քուէի դրուելով, ժողովէն միահամուռ ձայնիւ մերժուեցան:

Ի վերջոյ յանձնաժողովը յայտարարելով որ Ազգ. վարչութեան կաթողիկոսական խնդրոյ մասին յանձնաժողովոյ անդամաց մէջ անհամաձայնութիւն գոյացած է և ինչ ինչ կարևոր բացատրութեանց համար յառաջիկայ նիստը դադարեցնելու առաջարկելով, ժողովը սոյն առաջարկութիւնը ընդունեց և որոշեց յառաջիկայ ուրբաթ օր դադարեցնել նիստ ընել. այս նիստը կարծեմք վերջնը պիտի ըլլայ:

Տիգրանեան Մկրտիչ սրբազան Ազգ. վարչութեան կրկին և կրկին պաշտօնագրաց հակառակ մինչև ցարդ Տիգրանակերտէն հեռանալ չուզելով, Քաղ. ժողովը ուրբաթ օր որոշեց Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոսը կառավարութեան միջոցաւ Պոլիս բերելու համար թագրիւր գըրել առ Բ. Դուռն:

Նոյնպէս Տիգրանակերտի Առաջնորդական Տեղապահ ֆիլիպպոսի վարդապետի դէմ Բ. Դրան և տեղական կառավարութեան կողմանէ եղած դանդաղանքները ուշադրութեան առնելով, հեռագիր զարկաւ ֆիլիպպոս վարդապետի որ ինչ ինչ խնդրոց վրայ տեղեկութիւն տալու համար անմիջապէս Պոլիս վերադառնայ:

Խարբերի Պետրոս վարդապետ ալ Ազգ. վարչութեան կողմանէ Բարուի առաջնորդական Տեղապահ անուանուած, բայց վարչութեան հրամանին անստատած ըլլալով, մայրաքաղաքս կանչելու համար ստիպողական հեռագիր զարնըուեցաւ:

Մուշէն տեղեկութիւն կուտան մեզ թէ Կարնոյ առաջնորդ Գեր. Յարութիւն սրբազան ըստ հրամանի Ազգ. վարչութեան յունվար ամսոյ վերջերը Մուշ գացեր և առաջնորդական ընտրութեան ձեռնարկեր է: Անցեալ շաբթու Յարութիւն սրբազան հեռագրաւ հարցուցած էր Ազգ. Պատրիարքարանի թէ ընտրելեաց ցանկէն դուրս անձանց ալ քուէ կրնայ տրուիլ:

Օրէնքն արդէն բացորոշապէս պարզած ըլլալով այդ կէտը, Յարութիւն սրբազանի այդպիսի հարցում մը ուղղելը արդարեւ զարմանալի կը թուի մեզ:

Դուռնափուր Մայր եկեղեցւոյ թաղ. խորհրդոյ և դպրոցի հոգաբարձութեան մէջ ծագած անհամաձայնութիւնը քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովը կրակի օր կրկին գումարեցաւ թաղ. խորհրդարանը, բայց անհամաձայնութեան առիթ տուող կէտերը չատ և կրնճաւից ըլլալով, չկրցաւ վերջնական արդիւնք մը ձեռք բերել: հետեւաբար վաղը երրորդ անգամ պիտի գումարի:

Սոյոք է որ Յանձնաժողովը խընդիրն ի հիմանց քննելու և իմաստասիրելու եղանակաւ կը վարուի սոյն խնդրոյն մէջ. սակայն այսպիսի օրերու մէջ եկեղեցին անխնամ և անմարմին չը ձգելու համար աւելի լաւ կրնէ եթէ հրաժարեալ թաղ. խորհրդի գիւմարեալ թաղ. խորհրդէն և եկեղեցւոյ պիտոյքը մատակարարելու համար. միւս կողմանէ իր քննութիւնը անխուզ և անվրդով շարունակելու պայմանաւ:

Հաճի՛ն երեսփոխան ընտրուելու է շիտաէեան Սարգիս էֆէնտի:

Կը յիշեն անշուշտ ընթերցողք որ զինուորական տրոց բաշխման և հաւաքման եղանակին վրայ ծրագիր մը խմբագրելու համար ասկէ առաջ Բ. Դրանէն հրամանագրով եկած էր Ազգ. Պատրիարքարան և Ազգ. վարչութիւնն ալ բանիբուն և օրէնագէտ անձերէ յանձնաժողով մը կազմելով տրոց բաշխման և հաւաքման վրայ հարցում մը ուղղած էր առ Բ. Դուռն:

Շաբաթ իրիկուն ծանուցագիր մը եկաւ Բ. Դրանէն որ յանձնաժողովոյ հարցման մերժողական պատասխան տալով, ծրագրին փութացումը կը հրամայէր:

Հետեւաբար Ս. Պատրիարք Հայրը մտադիր է սոյն խնդիրը Ազգային ժողովոյ յառաջիկայ նստին ներկայացնել:

Պրուսայի վրայ այս անգամ բերկրառիթ լուրեր կ'ստանամք:

Տեղւոյն ուսումնասէր պղպայնք վարժարանին նիւթական վիճակը ուշադրութեան առնելով, իբր 7-8 ամիս առաջ ուսումնասիրաց ընկերութիւն մը հաստատել, վարժարանին բոլոր ծախքերն իրենք ստանձնելու և անկախ Հոգաբարձութիւն մը կազմել են: Սոյն հոգաբարձութիւնը վարժարանին մէջ հայկարան և գաղղիարան գասատուի մը պէտքը զգալով, տեղւոյն քահանայներէն արժ. Տ. Սահակ բարեկրօն քահանան մայր-

ութաբար խրկած էր արժանաւոր դասատու մը դառնելու համար առանց թոշակի առաւելութեան նաշելու:

Ուրախ եմք տեսնելով որ Տ. Սահակ քահանան յաջողեցաւ բանիբուն և հեղաբարոյ դասատու մը դառնելու ամենուն համակրութեանն արժանի որ է էլ մասեան Միսաք էֆէնտի:

Սա Տրապիզոնի վարժարանաց և մայրաքաղաքի Մէղայուրեան բարեհամբաւ վարժարանի մէջ երկար ատեն դասախօսութեան պաշտօն վարած ըլլալով ամենայն արժանաւորութեամբ, տարակոյս չունիմք թէ իր գիտութեամբն ու վարուքը սիրելի և օգտակար պիտի ըլլայ Պրուսայի ազգայնոց և տեղւոյն ուսանող մանկրէն գեղեցիկ արդիւնքներ ձեռք բերելու պիտի յաջողի:

Այս առիթիւ կապատեմք աւելի բերկրառիթ լուրեր հրատարակելու Պրուսայի վարժարանաց վրայ:

Կարնոյ Գաւառական Ընդհ. ժողովոյ մեծագոյն մասին, այսինքն 25 երեսփոխանաց ստորագրութեամբ գիր մը եկած է ի Պատրիարքարան, որով ստորագրող երեսփոխանք Գեր. Յարութիւն Սրբազանի մասին գումարեալութիւն յայտնելով, բողոքողաց գանդատները անստոյգ և տարապարտ կը համարեն:

Թիֆլիզէն մարտ 4 թուով հետեւեալը կը գրեն մեզ:

« Ամսոյս 3 ին Ս. ֆէթրսպուրկէն հեռագիր մը եկաւ հոս, որ կը ծանուցանէր թէ Ամենողորմած կայրը հաճեր է Գեր. Մակար Ս. արքեպիսկոպոսը Պետրապոլիոյ և Նախիջևանի առաջնորդ և Գեր. Գաբրիէլ Ս. արքեպիսկոպոսը Թիֆլիզի և բովանդակ վրաստանի առաջնորդ հաստատել զոր Թիֆլիսի վեստնիկ անուն ուսաներէն լրագիրն ալ այս աւուր թերթի մը հրատարակելու էր: »

#### Պ Ա Տ Կ Ե Ր

Լրագրաց մէջ կը կարդամք թէ նիկոմիդիոյ փոխ. առաջնորդ Արժ. Ստեփաննոս վարդապետ գիւղի մը եկեղեցւոյ պատկերները վերցնել տուեր է եղեր. ուստի ժողովրդեան ևս գայթակղութեան առիթ տուեր է:

Գայթակղելու բան մը չէ այդ, որովհետեւ Հայաստանեայց եկեղեցւոյ գրութեան համեմատ պատկերները դեղեցիկանկար և պայծառատեպիլ ըլլալու են և ոչ թէ անշնորհք ու անճոռնի, որք աւելի ժողովրդը:







գասեր, եկեղեցասեր և դպրոցասեր բառերն հակասահմանադրականութիւնն և իբր փոխ-Առաջնորդ իւր իրաւասութեան արդար սահմանին մէջ գործելն միապետութիւն կը նշանակեն: Թող ցուցանէ մեզ ո՞րք են այն կէտերն որ Ազգային օրինաց ընդդէմ վարուած լինելու ամբաստանութեան կենթարկեն զՆորին գերապետութիւնը, թաղ խորհրդոյ մը ընտրութեան մասին ազգասահմանադրութեան ո՞ր յօդուածոց տրամադրութիւնքն են. զորս չը գործադրեցնաւ և եթէ Գեր. Ստեփաննոս վարդապետ յառաջ քան զքուէարկութիւն չը յարգեց երեւելեաց որոշումն, հակասահմանադրական բառեր թուոյց բերնէն, միապետաբար գործեց, սիրածը գովեց և չտրամադրեց, է՞ր Պ. Նամակագիրն և ընդ նմին իւր սիրելիներն ամենայն փափաքանք մասնակցեցան նոյն քուէարկութեան և յորդորեցին ի նախնակցել զայլոն, և այժմ այդ ընտրութիւնը հակասահմանադրական կը կոչեն: Ի վերջոյ թող ցուցանէ մեզ այդ բազմաստորագիր (-) հանրագիրն ստորագրող երևելիք ինչ առարկութեամբք և Ազգ. Սահմանադրութեան ո՞ր յօդուած իրենց նեցուկ առնելով կամբաստանեն և կը բողոքեն առ ֆաղ. ժողովը և եթէ ֆաղ. պատկառելի ժողովը եւս, որ չեմք կարծել իրարք ի գատ հրաւիրած է զՆորին գերապետութիւն, յ՞որ անհերքելի առարկութիւնն և յ՞որ զօրաւոր փաստ յնելով, բրած է զայդ, մինչդեռ իւր գրասեղանին վրայ կը կենայ ընտրողական ժողովոյ տեղեկագիրը, յորում յայտնի և պայծառ կը տեսնուի ընտրողաց մեծադոյն մասին քուէարկութեան մասնակցեցող ինչն և յորում պայծառ կը տեսնուի թէ՛ Գեր. Ստեփաննոս վարդապետ քանի՛ ճշգրտապէս եղած է ազգ. օրինաց և քանի՛ նախանձախնդիր:

Պ. Նամակագիրն ի զուր կը ճգնի Ազգ. օրհնեալ սահմանադրութեան ճշմարիտ աւանդապաշտ, ազգասիրութեան, հայրենասիրութեան, ուսումնասիրութեան կատարեալ տիպար, անձնանուիրութեան բոլորանուէր զոհ, եկեղեցոյ սոյն բարձր պաշտօնէին անբիծ պատիւն կոյր կը բեր յագեցնելու համար հնարուած այլանդակ սուտերով և բանդագուշանօք ազարտել, ի զո՞ւր կը ճգնի թշնամական սլաքներով խոցոտել նորա սիրտն. նա վեհանձնութեան զրահն է զգեցած, նա արդար է իւր խղճին առջև, նա իբր աշակերտ ճշմարիտ վարդապետէն իւր վարձատրութիւնը հաւածուելու մէջ կը գտնէ և չը վրդովիւր երբէք եթէ տեսնէ թէ վեհապետ ժողովրդեան արդար գնահատութեամբ յառաջ եկած այդ ընտրութեան արդիւնքը ոմանք իրենց համար մեծ հարուած մի նկատելով կը բարբանջեն և կը զառանցեն:

Կը խնդրեմ. . . խմբագիր, հաճեցէք ներկայս յանուն ճշմարտութեան գետեղել Ձեր պատուական Հայրենիքի մէջ, որոյ համար կանխաւ յայտնելով Ձեզ իմ շնորհակալիքս

Մնամ  
1876 թիւտ. 29 Ձեզ շնորհապարտ  
Պարտիզակ և անձնանուէր  
ԱՇՈՏ

Հետեւեալ նամակը որ Մաղիսայէն խրկուած է մեզ, տեղւոյն երկուսեւ վարժարանին ողբալի կացութիւնը նկարագրելով, դառն գանգատ կը յայտնէ թաղ. խորհրդոյ անդամոց գէտ, որոնք արժանաւոր դաստուարները վարձատրելու տեղ զանոնք պաշտօնանկ բերելու ուսուցող մանկուոյն կրթութիւնը ապրկար անձանց ձեռքը յանձնելու են: Տարակոյս չունիմք որ Պատ. Թաղ. խորհուրդը սոյն տողերը ուշադրութեան առնելով, զարժանք կը տեսնէ յօդուած Մաղիսայի մանկուոյն:

. . . խմբագիր . . .

Սոյն 19րդ դարուս մէջ, յառաջադիմասէր Հայ մի, ինչ ինչ տեղեր տղայոց ուսման ու դաստիարակութեան մասին տակաւին իւր Ազգին անտանելի անդալուսութիւնն և անտարբերութիւնը երբ կը տեսնէ, արդարեւ մեծ զարմացմամբ զարմանալով, ալ լուսութեան վարդապետը բուրովին պատուել և իւր սրտին ցաւերը դուրս թափել կուզէ ի լուր անդալուսից եւ ի զգաստութիւն անմղտաց, ապա թէ ոչ, նոյն Հայուն խիղճը զինքը տոչորելով, Աստուծոյ ու Ազգիս առջև պարտազանց կը գտնուի, որովհետեւ ականատես ըլլալու չխօսիլ Ազգ. Ս. Ս. Ս. Ս. Ս. գործ չէ, այլ Սողոմ Գոմարի:

Ահա քաղաքիս Ազգային կարեւորագոյն գործոց յետին աստիճան քստմնելի ու անկարգ և խայտառակ վիճակն ալ զիս խղճիւ հարկադրեց, որ առաջին նամակաւ նկարագրել փութամ, ինչու որ ալ համբերութիւնս սպառեցաւ. ուստի կը խնդրեմ. . . որ ձեր ազգօգուտ Հայրենեաց առաջիկայ հրապարակին վրայ սոյնը ազգասիրաբար հրատարակելու բարեհաճեք յարթութիւն մերայնոց:

Մաղիսայի միայն վարի թաղը իբր 500 ընտանիք կը բնակին, մի փառաւոր եկեղեցի և մի նորայէն զանգակատունէն ի գատ, ունին նաև երկուսեւ վարժարան: Բայց մանկանց դպրոցը նաբուգողոնոր արքայէն մնացած ատուի նման շէնք մի է, որուն մէջ ամառ ձմեռ պատած գարշահոտութենէ անասունք անդամ չեն ուղեր բնակիլ: Գալով բարոյականին, ուսմանց ընթացքը ոչինչ, հետեւաբար Հայոց Պատմութեան դաստիարակութիւնը բոլորովին վերցուելով, այսօրուան օրս իբր գոցուած կը համարուի: Պարզէնք խընդիրը համառօտի:

Թուականէս ճիշդ 8 1/2 ամիս առաջ, Պարտիզակցի Պատ. Յովհաննէս քաջ հայկաբան և տեղացի խոչատուր էֆ. (բաւական) հմուտ տաճկաբան վարժապետաց դաստիարակութեամբը դպրոցս մինչդեռ ըստ կարի Ար. Գ. Ի. Ս. Ա. Ս. Ս. Ս. կը յառաջադիմէր, թաղ. խորհուրդը (յորմէ խեղճ ժողովուրդը նախնի թաղ. աղաներէն աւելի, ըսյ և բարեկարգութիւն կը պատէր) 14 տարուան Ազգիս պաշտօնեայ և 5-6 վարժապետաց աշակերտ նուիրող յիշեալ Հայկաբանը փոքրիկ պատճառաւ մը իսկ 3 տարի միայն Ազգիս հաւատարմութեամբ պաշտօն վարող յիշեալ Տաճկաբանն ալ առանց պատճառի դպրոցէն կը հրաժարեցնէ, որոնց փոխարէն 17-18 տարեկան համբակ պատանի մը Հայրենի ու Տաճկերէն:

նի գաստու կը կարգէ, որով փերականութիւն ուսանող 30 աշակերտաց Տաճկերէն սովորելու մասը մնի Այլազգ գրագիրներու, և միւս քառորդէն ոմանք շուկայն արհեստաւորաց քով երթիւ եկելով, ոմանք ալ ցիր ուցան փողոցները մինչ ցայժմ շուն կը քարեն: Այս այսպէս ճշմարտապէս: Բիւր եղուկ:

Միամիտ ու ուսմիկ ժողովուրդը դրամ տալու միշտ պատրաստ և հընարանք կեցած, թաղականաց, և մարտ ամսոյն մէջ դպրոցը նոր ի նորոյ շինել տալով, Կ. Պոլիսէն կամ ի զմիտէն դաստիարակներ բերել պիտի տանք. այսպէս այնպէս պիտի ընենք, Բուլլուհ աղէկ կըլլայ, բսելուն խաբուելով, իւր մատաղ զաւակներովը միատեղ 500 տնուոր ազգս անպատասպար, առանց բարոյական հացի, կաթի և ջրոյ շուարած մնացած է: Բիւր եղուկ:

Արդ մեծապատիւ խմբագիր, ինչպէս որ դաւառնեք են բերեմ բերկրաւ լիթ լուրեր առնելով, պարծենալ փափաքելով, որն որ աղանութիւն է, նոյնպէս երբեմն ալ տրամաբխ կերպը լսելով, բարեխառութեանը հոգալ ու աշխատիլ բարեհաճեցնիլ քաջ գիտեմ, ասիկայ ալ վեհանձնութիւն է, ուստի կրկին կաղաչեմ, որ Մաղիսայի ազգայնոցս ներկայ ամենաթշուառ վիճակը (որն որ շատ մարտ ամիսներ անցաւ ու չերջանկացաւ). ձեր համոզիլ ու ազգու խորհրդածութեամբը ի միասին ներկայիւս կէտ առ կէտ հրատարակելով, զԹ. աղայս ՅՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ յորդորէք, և իրենց առ ազգունեցած ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՆ իրենց ճանչցնելով, մեղմացնէք անոնց ապուռած խիղճերը, զի զ՞ր քարեղէն սիրտ չբեկանէր այս ընթացք անօրէն:

Նամակս ստորագրելէս առաջ տեսայ, որ 7 ամիսէ ի վեր անկարգ ու անկանոն ընթացող աղկանց վարժարանն ալ ի փառս Ուսումնասիրեաց ուսմանց իւր մանկանացուն կնքեց, որուն Մեծն վարդանայ Պարբերութեան ներկայացմամբը յուղարկուորութեանը հանդիսակից եղայ ի 13 փետր 1876 ուրբաթ գիշեր:

Ի 16 փետր. 1876  
Ի Մաղիսա  
Մնամ միշտ բարեմտալթու բարօրութեան Ձերոյ Ուսումնաստենջ Հայ մի:

Մայրաքաղաքս պանդխտող վանայ Արտամէտ գիւղի աղղայիններ Արշակունեան անուամբ ընկերութիւն մը հաստատելով, դպրոց մը բացել են Արտամէտ գիւղի մէջ տեղւոյն աղբաւ զաւակները կրթելու համար:

Այս նպատակը յայտնող նամակ մը խրկուած է մեզ Արտամէտի աղղայնոց ստորագրութեամբը, ընդ նմին և դպրոցին աշակերտաց կողմանէ առ պաշտպանս իրենց ուղղեալ ուղերձ մը, զորս հոս կը դնեմք ի քաջալերութիւն ուսանողաց և ի դուհունակութիւն յիշեալ դպրոցին հեղինակ եղող աղղայնոց:

. . . խմբագիր  
Կը խնդրեմ որ ներկայս ձեր պատուական թերթին մի անկիւնը զետեղելու շնորհ ընէք:  
Ինչպէս շատ անգամ գտնուած են մեր

աղղին մէջ այնպիսի աղղասեր և հայրենասեր անձինք, որք իրենց հայրենեաց օգտին համար ամեն ջանք և քրտինք չեն խնայած և իրենց ապագայ սերնդեան համար անմոռաց յիշատակները թողած են: Աոցա կարգէն է նաև մեծ. Յարութիւն աղա Խաչատուրեան, որ իւր կենաց ասպարիզին վրայ կարծես թէ ուխտած է մէն մի քայլին մէջ աղղային բարեկարգութեամբ հարստացնել տեղւոյս դպրոցին և եկեղեցոյ զարգացման և պայծառութեան համար ամեն խնամք տանել: Եւ մասնաւորապէս այն մեծ բարեկարգութեան համար աւելի գովելի է, որ Ռուսաստանէն տեղւոյս եկեղեցոյն համար մի մեծ զանգալ բերել տալով նուիրեց, որուն համար համայն գիւղացիքս կը փութամբ կանխաւ մեր անկեղծ շնորհակալութիւնն յայտնել և կը մաղթեմք յերկնց որ տայ նորա սըրտին կատարեալ արիւթիւն, որպէս զի իւր հայրենասիրական ձեռնտուութիւնը անպակաս ընէ: Որ միշտ ապագային զայն ոսկի տաւերով պիտի հռչակէ:

յունվ. 12 (Ստորագրութիւնք)  
Արտամէտ Գիւղացոց

Հայրենասէր Տեառք կը խնդրեմք ամենակալ թագաւորէն, որ Արշակունեաց ընկերութեանը բոլոր անդամոց շատ օրեր և շատ կեանք պարգեւէ. որ անոնք պատճառ եղան մեր ապագայն երկանկացնելու, մանաւանդ որ ամեն պիտոյք խրկելով զմեզ կուրախացնեն, և որով կը պարտաւորեցնեն զմեզ Արշակունեան վարժարանի մանկունքս ուրախ և զուարթ սրտով և ցնծուն բերնով ընկերութեանը շատ օրեր և շատ արև մաղթել ի բարօրութիւն վարժարանին և ի պարծանս գիւղիս Արտամէտու:

Հայրենասէր Տեառք, ձեր աղնիւ սիրտը թող չը վշտանայ որ երբեմն մեր գրաւթիւն առ ձեր յարգութիւնը կուշանայ. մենք մեզ ձանձրութիւն չենք համարել ձեր հայրենասիրութեանը անդադար սըրտարուխ նամակներ ուղղել. դուք որ ամեն նեղութիւն և շարժարանք մեզ համար յանձն առել էք. բայց եկուր տես որ փոստայի ծախք զմեզ մեր այս ցանկութեանէն ետ կը ձգէ. առ որ ազգասիրացը ներողութիւնը կը խնդրեմք:

յունվ. 12 Արտամէտ  
Եւ մնամք ձեզ երախտապարտ խոնարհ զաւակը  
Աշակերտք Արշակ. վարժարանի  
Արտամէտ գիւղի

Ն Ո Ր  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ՆԱԽԱԳԱԿԻ  
ԳԻՏՈՒԹԵԱՆՑ  
ԵՒ  
ԱՐՈՒԵՆՍՏԻՑ  
Ազգային դպրոցներու համար  
Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Գ  
Ա Շ Ի Ա Տ Ա Ս Ի Ր Ե Ց  
ՅԱՌԱ Յ. ՄԻՐՅԱՆ  
Նախկին աշակերտ Ա.  
Նուպար-Շահնագաբեան վարժարանին:

Սոյն գրկոյքը որուն մէջ կը պարունակին աշխարհագրական, բնագիտական, արուեստից և ճարտարութեանց, բնական պատմութեան, թուագիտութեան, չափոց և դրամաց, օրացոյցի կարեւոր գիտելիքներ, խիստ պարզ և դիւրընտել ոճով գրուած, իւր տեսակին մէջ առաջինն ըլլալով, թէ՛ մանչ և թէ՛ աղղիկ տըղայոց յարմար և օգտակար դասագիրք մ'է:

Մանկահասակ բայց բանդէտ հեղինակը տղայոց հետ խօսելու ատեն այնպիսի կոկիկ լեզուաւ և գրաւիչ ոճով մը կը խօսի, որ տղայոց զուարճալի բայց օգտակար դասեր ուսու-



ցանկերու ատեն անոնց սիրտն ու միտքն ալ կը հրահանգէ :

Մայրաքաղաքիս և դաւառաց վարժարաններու աշակերտք մեծ օգուտ կրնան քաղել ասկէ, զուարճակիրն հետ օգտակարն ու գեղեցիկն ալ ուսանելով :

Կը ծախուի ի գրատան փարիզու և Մէրճան Սրապեան Պաղտասար աղայի խանութը :

Կաշեկաղմ գին 8 զրշ :

Բիւնկեանէն՝

... Խմբագիր

Տարիէ մը ի վեր Ազգային լրագրաց սուղ էջերը կ'ստանան և օգուտ յօդուածներով լեցնող Արսլանեան Պ. Նազարէթին հայրենասիրական մէկ գործը պատմեմ Ձեզ որպէսզի դուք և ձեր ընթերցողները լաւ գնահատէք զայն :

Վարդանանց նահատակաց քաջագործութիւնքը տօնելու օրը զոր յիշատակել ամէն ճշմարիտ հայու քաղցը պարտքն է, մինչդեռ Բիւնկեան գիւղի եկեղեցւոյ զանգակը յեկեղեցի կը հրաւրէր զժողովուրդը և յետ աւարտման եկեղեցւոյ դպրոցական մանկտին վարդանանց հանդէսը կը տօնէր ազգային երգերով և ատենախօսութիւններով, մինչդեռ կըսեմ երախտագէտ ժողովուրդը հայրենասիրական զգացմամբ լցուած եկեղեցին խոնկեալ էր իր զաւակաց դըպրոցական հանդէսը վայելելու համար, Պ. Նազարէթ Արսլանեան ճիշդ մի և նոյն միջոցին անդին դայթակղելի հանդիսով մը կըբազէր, այսինքն քանի մը ընկերով Կաշեկաղմ չալել տալով գիւղին փողոցները և դաշտերը պարտելու ելած էր . . .

Ձեմ ուղեր երկարօրէն դրել, այլ միայն սա կուզեմ Ձեր ազնիւ ընթերցողաց հասկցնել որ ամեն օր դպրոց, կրթութիւն և ուսմանը ազազալող Արսլանեանի կեանքը տեսնելով, անոր կեղծ և խաբեպատիր հրատարակութեան չը խաբուին :

1876 փետրվար 27 Բիւնկեան

Աստուծոյ հետ խոսող Խ. Մեծարարեան

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հէրոսէրի զօրաց ընդհանուր հրամանատար Աճմէտ Մուխթար փաշայի կողմանէ եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ մարտի 3/21 րն զօրաց մէկ դունդին և ապստամբաց մէկ կուռ մը ծագեր է Տօկա կիրճին քով, ուր բանակած էին այս վերջիններն :

Օսմանեան զօրքերը ապստամբաց դիրքը գրաւելէ և զանոնք ցրուելէ վերջը ի դարձին լեռանց վրայ ուրիշ խումբի մը հանդիպեր են որ 500 հոգիէ կը բաղկանայ եղեր, Օսմանեան զօրքերը անոնց վրայ յարձակեր և կոտորեր են. ապստամբները 60 հոգի մեռեալ թողով պատերազմի դաշտին վրայ հեռացեր են : Չօրաց կորուստը աննշան է, զրեթէ 6 մեռեալ և 6 վիրաւոր :

Մուխթար փաշա միանգամայն կը ծանուցանէ թէ ապստամբաց թիւը 7-8000 կը կարծէ, բայց քննելով որոշեր է որ երեք հազարէն աւելի չը հասնիր եղեր :

— Ըստ յանձնարարութեան ծովա-

յին գործոց պաշտօնէի արքունի նաւարանին մէջ երկու նոր աւաղան շինուած ըլլալով, երէկ հանդիսապէս բացուեց կատարեցաւ ի ներկայութեան Բարձր. Երևուի իզդէտտին էֆէնտիի, Մահմուտ ճէլալէտտին էֆէնտիի, Բարձր. մեծ Եպարդոսի և ուրիշ նախարարաց :

— Հրդեհի ապահովութեան ընկերութեանց դէմ հասարակութեանէն խել մը դանդատներ եղած ըլլալով քիթապէթին, Սախտ պէյ այս մասին հարկ եղած դարմանը տանել որոշեր է յօդուտ ապահովելոց :

— Տարածայնութիւն կայ թէ առանց տոկոսի 10 նոց, 25 նոց, 50 նոց 100 նոց նոր թղթագրամներ պիտի տպուին իբր 15 միլիոն լիրայի որոնք տասը տարուան մէջ ամբողջապէս պիտի վերցուին ամեն տարի մէկ ու կէս միլիոն լիրանոց թղթագրամ ջնջելով :

Այս թղթագրամները պաշտօնէից ամուսկանաց, արքունի գործարաններու օրականաց և զինուորական ծախուց համար պիտի գործածուին : Կայսերական դանձէն և մարաթուանէն զատ կառավարութեան բոլոր պաշտօնատուները այս թղթագրամներէն պիտի ընդունին :

Նոյնպէս պիտի ընդունուի, 40 փարանոց թղթագրամ պիտի հաստատուի տեղը :

Այսպիսի տարածայնութիւն մը ըստոյդ չկրնար ըլլալ, քանի որ այս մասին պաշտօնական ու է տեղեկութիւն մը չկայ տակաւին :

— Պաղտատէն հեռագիր մը կը ծանուցանէ թէ մարտի 20 րն 11 հոգի ժանտախտէ բռնուեր և չորս հոգի մեռեր են :

— Եսովեր փաշա հեռագրական պաշտօնով այսօր վիէննա կուղևորի :

— Վիէն. Սուլթանը Չըբաղանի պալատը փոխադրեցաւ :

— Առողջապահական վարչութիւնը երկու բժիշկ խրկեց Պաղտատ :

Վիլնորիս Թագուհին Անգղիոյ արտաքին գործոց նախկին պաշտօնեայ Պ. Տիլդրայէրի իւր կենդանագիրը նուիրեր է :

— Կըսուի թէ Ռուսաց կայսրը ամուր յեւրոպա պիտի անցունէ :

— Մէքսիկայի մէջ ապստամբութիւն ծագեր է :

— Երէկ Թաք Ֆիւրիշ անուն երեւելի պատկերահան դասատուն վիէննայի մէջ մեռեր է ի հասակի 76 ամաց :

— Գրիւի գործարանապետը ոսկեգօծեալ մետաղով բանուած չորս թնդանօթ նուիրեր էր Գերմանիոյ կայսեր :

— Արևիմ կոմսը Պէրլինի դատարանին կողմանէ իբր մեծ մասնութեան մը հեղինակ ամբաստանուելով, ոստիկանութիւնը անոր ինչքը գրաւման ներքե կը բռնէ մինչև ցատարտ դատատանին :

— Պէրլինի պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ Չինաստանի երկրին մօտերը գործուած աւաղակութեանց առաջն առնելու համար Անգղիոյ, Ռուսիոյ, Միացեալ Նահանգաց, և Գերմանիոյ կառավարութիւնք միախորհուրդ որոշեր են նուէր խրկել հոն : Արդէն երկու գերմանական նաւերու հրաման եղեր է Հօնկ-Ֆօնկի նաւահանգիստը երթալու և ամայս վերջերը ուրիշ երկու

գերմանական նաւ ալ պիտի խրկուի :

— Տօն Գարլուս Կրաց քաղաքը պիտի երթայ իւր մայրը տեսնելու համար որ Կրացի Կարմեղեանց վանքը կը գտնուի այժմ : Յետոյ Հունգարիա պիտի երթայ բնակութիւնը հոն հաստատելու համար :

— Դօթէնի կայսրուհին և իւր որդին Լուի իշխանը ծպտեալ ֆասսէլ երթալով, Վիլհէլմի Զօէյ դղեակին ուր բնակեցաւ Նաբօլէոն Գ, այցելութիւն մը տուեր են :

— Նուպար փաշա քանի մը օրէն Եգիպտոսէն Եւրոպա կուղևորի :

— Կալէսի իշխանը (Անգղիոյ դատաւարաց) Գահիրէ հասեր է :

ԸՆԹԱՅԻ ԴԻՍՄՈՑ

Table with 3 columns: Item, Unit, Price. Includes items like Անգղ. վրա, Նաբօլէոն ոսկի, Իմպերիալ ոսկա, Գրքերից, Ֆրանք, Սօֆօրին, ձերմակ մէճիտի տարբերութիւն, Հինգնոց տարբերութիւն, Գարպօն արծաթ, Թղթագրամ, Պղինձ.

Ա Ձ Դ

Մեր գաւառաբնակ գործակալներէն մէկ երկու հոգի լրագրոյս բաժանորդագիրները կոկորդին անցուցած ըլլալով, կը հրաւիրեմք այնպիսիները գրամներն առ մեզ խրկելու. եթէ ոչ պիտի պարտաւորիմք անունին մի ըստ միովէ հրատարակելու :

ՏՕԲԹՈՐ ՓԱՓԱՁԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է իրեն դիմող հիւանդները դարմանել, ամէն երեքշաբթի և շաբաթ, ժամը 3-5 Սամաթիա Հայկական ընկերութեան քաղնոյնի դէմը Մ. Ճիվանին դեղարանը. և ժամը 8-10 Սուլթան Աճմէտ տիվան եօլու Մ. Եօրթ Գանիլի-Գիտիի դեղարանը թիւ 128 :

Ա Ձ Դ

ԻՄՍՍԱՍՄԻՐՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

Ա. Տըպէյ գաղղիացի հեղինակին «ԻՄՍՍԱՍՄԻՐՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ» անուն գործը, որ երկար ատենէ ի վեր թարգմանած ըլլալով, տպագրութեան տալու համար պատեհ առ թի մը կըսպասէի, վերջապէս, ամուսնութեան ինգրոյն թէ գրական հրատարակին վրայ, և թէ ամեն տեղ կարևորութիւն ստանալը տեսնելով, համարձակեցայ յանձնել տպագրութեան, որուն առաջին թերթը տպագրուեցաւ և հետըզհետէ ալ պիտի տպագրուին, այնպէս որ 350 երեսներէ բաղկանալիք այս

գործը կարճ միջոցի մը մէջ աւարտի : Բայց տպագրութեան ծանր ծախսով սակաւ ինչ թեթեւեղեղ նպատակաւ, բաժանորդագրութեան մ'ալ ձեռնարկած եմք, վստահ ըլլալով որ գրասէր ազգայինք այս մասին իրենց օժանդակութիւնը չպիտի զլանան մեզ :

Մէկ օրինակին բաժանորդագիրն է երեք քառթ մէճիտ. — Բաժանորդագրութեան տեղն է Կ. Պոլիս, Բիզանտիոնայ խան Սամուէլ էֆէնտի Պարտիզպանեանի տպարանը :

1876 Փետրվար 26

Միտլի Ս. Գահիրէ

ԾԱՆՈՒՑՄՈՒՆԻՔ

ԱՉԳ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ Սկիւտէ Հայ Կիւնիստեղին է Չարգարեան գործարան Սուլթան Համամ թիւ 14 և բոլոր Հայ դրավաճառաց քով. գին 5 զրշ : Դպրոցաց համար բուն գինէն աւելի զեղչ կըլլայ :

ԲԻՒՍՏՈՆԻՒԹԻՒՆ

ԼՈՒՏԵՐՊԱՅԱՆ ՀԱՅԵՐ Թեյի-Տեյի Գ. Գահիրէ : Լուտերական Հայոց միջոցութիւնքը հերքող և բողոքականութիւնը Ազգին մէջ ո'ր ատեն և ինչպէս մուտ գտնելը պատմական փաստերով հաստատող ընտիր տեղորակ մ'է. կը ծախուի բոլոր դրավաճառաց քով և կամուրջի գլխուն պարագան ի գին 100 փարայ :

ԷԼԻՅՊ ՊԵՒ ԺԷՏԻՏ

Մ Կրէշ Կիւնիստեղին : Տաճկերէնի այբուբէնը ուսանիլ ուղղորդող համար դիրուսոյց քերական մ'է : Կը ծախուի Սրապեան Պաղտասար աղայի խանութը. գին 100 փրց :

ՊԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՆՅԻՆ ՆԱՄԱԿՆԵՐ, ԵՐԳԵՐ, ԱՌԱՄՆԵՐ ԱՌԵՂՍՈՒԱԾՆԵՐ

Արիստակես վարդապետ Տ. Սարգսեց : Սոյն գիրքը որուն մէջ կը պարուստանալին վասպուրական աշխարհի երգերը, վանայ բարբառով նամակներ և հանելուկներ, պանդուխտ ազգայնոց և բանավորաց ուշադրութեանը արժանի է :

Գինն է մէկ քառորդ արծաթ մէճիտ. կը ծախուի Մէրճան Պաղտասար աղայի խանութը և ուրիշ տեղեր :

Ա Ձ Դ

Լրագիրս ձեռքէ կը ծախուի կամուրջին գլխուն պարագան, սուհի Պ. Պողոսին խանութը և կամուրջին վրայ լրագրավաճառներու քով :

ՏՆՕ-ԽՄԻ. ՏԵՐ Մ. ՍԵՂԻՍԻԱՆ Ա. ՎԱՐԳԱՆՅԱՆ ՏՊԱԳՐ. Ս. Դ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ Բիզանտիոնայ խան քիւ 3